ԱՐՁԱՆԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Զրառատի գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

20 հունիսի 2013թ. գյուղ Զրառատ

2013թվականի հունիսի 20-ին տեղի է ունեցել Զրառատի գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Զրառատ համայնքի ավագանու անդամներ՝ Վարդգես Ենգիբարյանի, Գառնիկ Մելքոնյանի , Եղիշե Զաքարյանի, Նարինե Մկրտչյանի

Զրառատի գյուղապետարանի աշխատակազմից՝ Կարինե Սարգսյանի, Անթառամ Պետրոսյանի, Արամիկ Օվչիյանի, Լուսինե Եղիազարյանի ինչպես նաև համայնքի բնակիչների:

ՕՐԱԿԱՐԳ – Զրառատի գյուղական համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից 2012 թվականի հուլիսի 20-ից մինչև 2013 թվականի հունիսի 20- ը ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:

ԼՍԵՑԻՆ - Զրառատ համայնքի ղեկավար՝ Արթուր Ասատրյանի կողմից 20.07.2012թ. – 20.06.2013թ ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը: Արթուր Ասատրյանը ներկայացրեց 2012թվականի վերջին 5 ամիսների և 2013 թվականի առ 20 հունիսի ժամանակահատվածում համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կատարված հետևյալ աշխատանքները՝

2011թվականի դեկտեմբերի 12-ին համայնքի ավագանին իր № 28-Ն որոշմամբ ընդունել է 2012 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել է 8542,5 հազար դրամ, ծախսերը՝ 8542,5 հազար դրամ: Հողի հարկի չափը 2012 թվականի կազմել է 434,0հազար դրամ, որից 286. հազար դրամը ընթացիկ տարվա հարկ,148.0 հազարը՝ նախորդ տարիների ապառք , հավաքագրվել է 434,4 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանի 100 % - ը:

2012 թվականի գույքային հարկերը կազմել է 250,0 դրամ, հավաքագրվել է 250,9դրամ, որը կազմել է տարեկան պլանի 100 % -ը:

2012 թվականի դեկտեմբերի 21-ին համայնքի ավագանին իր № 8-Ն որոշմամաբ ընդունել է 2013 թ. բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 8995,5 հազար դրամ, ծախսերը՝ 8995,5 հազար դրամ: Հողի հարկը կազմել է 286,0 հազար դրամ, որից 6 ամիսների ընթացքում հավաքագրվել է 146,7 հազար դրամ, այսինքն 6 ամսվա հողի հարկի 102,5 % -ը: Գույքային

հարկերը կազմել են 250, 0 դրամ, որից անցած 6 ամիսների ընթացքում հավաքագրվել է 146,9 հազար դրամ, այսինքն 6 ամսվա գույքահարկի 116,8 % -ը:

Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում կազմակերպվել է համայնքի բնակիչների հաշվառում: Միջոցներ է ձեռնարկվել պաշտպանելու համայնքի բնակիչների օրինական շահերը: Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել քաղաքացիների առաջարկությունները , բողոքները և ձեռնարկվել է միջոցներ:

Ֆինանսների բնագավառում ապահովել է բյուջեի կատարումը , որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացվել համայնքի ավագանուն: Կազմակերպվել է տեղական հարկերի, տուրքերի և վճարների գանձումն ու վերահսկումը:

Տրանսպորտի բնագավառում կազմակերպվել է համայնքային երթևեկության ճանապարհների պահպանումը, անվտանգ երթևեկությունը համայնքային երթևեկության ճանապարհների և գյուղամիջյան ճանապարների վրա ապահովելու համար կատարվել է ավազի և խճաքարի փռում:

Առևտրի և ծառայությունների բնագավառում հսկողություն է իրականացվել առևտրի ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել է ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի թույտվություններ, որոնցից գանձվել է համապատասխան տուրքի գումարներ:

Կրթության բնագավառում աջակցել է հանրակրթական դպրոցի գործունեությանը:

Գյուղատնտեսության բնագավառում կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայություն: Գյուղացիական տնտեսություններին աջակցել է բարձր որակի՝ կարտոֆիրլի, հացահատիկի սերմացուների և ազոտական պարարտանյութերի ձեռքբերման հարցում:

ԵԼՈՒՅԹՆԵՐ – Ելույթ ունեցան ավագանու անդամներ Վարդգես ենգիբարյանը, Գառնիկ Մելքոնյանը

ՈՐՈՇՎԵՑ - Հաշվետվությունը ընդունել ի գիտություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա ԱՍԱՏՐՅԱՆ

20 հունիսի 2013թ